ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՏԴ 33
DOI: 10.56246/18294480-2025.18-13

ԱՅՐՈՒՄՅԱՆ ԻՐԻՆԱ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ և ՀԱԱՀ դասախոս
Էլփոստ՝ ayrumyanirina17@gmail.com
ԿՈՍՏԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի դասախոս
Էլփոստ՝lusinekostanyan90@mail.ru

Ցանկացած հասարակության տնտեսական առաջընթացի հիմքում ընկած է հասարակական արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացումը:

Ակնհայտ է, որ գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման ուղին նպաստում է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության անընդհատ աճին: Այս ուղին միաժամանակ հնարավորություն է տալիս առավել արդյունավետ օգտագործել գոյություն ունեցող ռեսուրսները և գյուղատնտեսության պիտանի հողերը:

Այժմ Հայաստանում պտղաբուծությունը գյուղատնտեսության մյուս ճյուղերի հետ միասին սկսել է զարգանալ արագ տեմպերով: Պտղաբուծության արտադրանքի արտադրության ծավալի աճը կարող է իրականացվել ինչպես հողատարածությունների ընդլայման, այնպես էլ արտադրության միջոցների արդյունավետ օգտագործման ճանապարհով: Առաջին դեպքում խոսքը գնում է ճյուղի զարգացման էքստենսիվ (ավանդական, դասական) ուղու մասին, իսկ երկրորդ դեպքում՝ ինտենսիվ: Ինտենսիվ ուղիով զարգացման դեպքում տեղի է ունենում միավոր հողատարածության վրա կապիտալի կենտրոնացում և նույնքան հեկտար հողատեսքի հաշվով արտադրանքի ծավալի աճ:

Այս հետազոտության նպատակը կայանում է նրանում, որ ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը պտղաբուծության մեջ կարող է փոխարինել ավանդականին՝ ապահովելով առավել բարձր տնտեսական արդյունավետություն: Ինտենսիվ այգեգործության զարգացումը մեր երկրում

կնվազեցնի այգեգործության տնտեսական ռիսկերը: Հետևապես դրանով է պայմանավորված սույն հետազոտության արդիականությունը:

Գյուղատնտեսությունը մի ոլորտ է, որտեղ տնտեսվարողները ներդրում են կատարում՝ հետագայում կատարված ծախսերի դիմաց առավելագույն շահույթ ստանալու նպատակով: Գյուղատնտեսությունը ներառում է բազմաթիվ ռիսկեր, սակայն ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը կօգնի նվազեցնել այդ բոլոր ռիսկերը:

Բանալի բառեր՝ *ինտենսիվ այգեգործություն, տնտեսական արդյունավետություն, բազմամյա տնկարկներ, ներդրումների արդյունավետություն, շահույթ:*

Ներածություն

Պտղաբուծությունը Հայաստանում ունի շատ հին պատմություն, սակայն դարերի ընթացքում նրա զարգացումը տեղի է ունեցել տարերայնորեն և դանդաղ[4]:

Ինտենսիվացումը պտղաբուծության մեջ ինտենսիվ այգիներ հիմնելու, բարձրակարգ տնկանյութի արտադրության, եղած այգիները վերակառուցելու, քիմիացման, ոռոգման, մեքենայացման առաջադիմական տեխնոլոգիաներ, նոր տեսակներ, մշակութային, խնամքի, բերքի, հավաքման, փոխադրման ու պահպանման, տարերային աղետների դեմ պայքարի համակարգեր ու արդյունավետ միջոցներ, պահեստարաններ, սառնարաններ, կապի վերամշակման կարողություններ ներդնելու միջոց է: Ինտենսիվության մակարդակը պտղաբուծության մեջ որոշվում է 1 հա-ի հաշվով ռեսուրսների կենտրոնացման աստիճանով[3]:

Տնտեսական արդյունավետությունը տնտեսական գործունեության արդյունքների և կատարված ծախսերի հարաբերակցությունն է: Տնտեսական արդյունավետությունը բնութագրում է կապը ռեսուրսների և թողարկվող արտադրանքի քանակի և որակի միջև [4]:

Ցանկացած հասարակության տնտեսական առաջընթացի հիմքում ընկած է հասարակական արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացումը: Արդյունավետության վերին սահմանը հանդիսանում է գոյություն ունեցող ռեսուրսների առավել ռացիոնալ օգտագործման դեպքում հասարակական և անձնական պահանջների բավարարումը[2]:

Աշխատանքի մեջ ներկայացվում են FRUITENIA նախագծի շրջանակներում ՀԱԱՀ Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսության տարածքում ուսումնա-

ցուցադրական նպատակով հիմնված հետազոտությունների համար լիովին ծառայող և ժամանակակից բոլոր ստանդարտներին համապատասխան ինտենսիվ այգու օրինակը և ավանդական եղանակով մշակվող պտղատու այգիների մշակման բազմամյա փորձը:

Նյութը և մեթոդը

Հետազոտությունում կատարվել է FRUITENIA նախագծի շրջանակներում ՀԱԱՀ Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսության տարածքում Ավստրիական զարգացման գործակալության (ԱԶԳ) ֆինանսական աջակցությամբ և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) համաֆինանսավորման ծրագրի միջոցով հիմնված ինտենսիվ այգու փաստացի օրինակը հաշվարկների համար: Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համաֆինանսավորման ծրագրի միջոցով հիմնված այգին գտնվում է Արարատյան դաշտի տարածքում, և կարելի է հետազոտությունները, որոնք իրականացվում են այդ այգում, օգտագործել որպես լավագույն օրինակ հենց Արարատյան դաշտի տարածքում: Ծրագրի նպատակը եղել է զարգացնել ինտենսիվ գյուղատնտեսությունը այգեպտղաբուծության ոլորտում:

Հետազոտությունում ներկայացված են տնտեսական արդյունավետության ցուցանիշների որոշման մեթոդները: Օգտագործվել են ավանդական և ինտենսիվ այգեգործության տնտեսական արդյունավետության ցուցանիշները և կիրառվել են համեմատության, անալիզի և սինթեզի, հարցման և դիտարկման մեթոդները:

Հետազոտության արդյունքները

Ներկա պայմաններում գյուղատնտեսության զարգացման ամենակարևոր խնդիրներից մեկը հանդիսանում է ճյուղի արդյունավետության բարձրացումը: Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը պտղաբուծության մեջ անսահման հնարավորություններ է տալիս պտղաբուծության արտադրանքների ավելացման համար: Ի տարբերություն ավանդական եղանակով մշակվող այգու՝ ինտենսիվ այգին արագ է անցնում պտղաբերման, միավոր տարածքի վրա տնկիները ավելի խիտ են տնկվում՝ ապահովելով այգու արտադրողունակության ավելի մեծ ինտենսիվություն: Այգիներում կիրառվում են մշակության արդիական տեխնոլոգիաներ, ապահովվում են բարձրորակ և մեծաքանակ բերք: Տնտեսական իմաստով պտղաբուծության ինտենսիվացում հասկացության տակ պետք է հասկանալ արտադրանքի արտադրության ավելացման և ճյուղի արդյունավետության բարձրացման նպատակով միևնույն հողատարածության վրա ավելի

կատարելագործված արտադրության միջոցների, իսկ երբեմն էլ ավելի որակյալ աշխատանքի կիրառում[2]:

Աղյուսակ 1.
Ինտենսիվ և ավանդական այգիների աշխատանքների համեմատությունը Արարատյան դաշտի տարածքում [10]:

Աշխատանքի ձևերը	**Ինտենսիվ**	**Ավանդական**
Ծառերի թիվը	Թզուկայինի դեպքում՝ 2000-3000, կիսաթզուկայինի դեպքում՝ 800-1200 հատ:	400-500 հատ
Աշխատանքների կատարում	Ձեռքի աշխատանքները հասցվում են մինիմումի, իսկ ցածր սաղարթ ձևավորելու շնորհիվ անհամեմատ հեշտանում են աշխատանքները:	Շատ են ձեռքի աշխատանքները, բարձր սաղարթի հետևանքով դժվար է կազմակերպել խնամքի աշխատանքները:
Բերքատվություն	Կրկնակի բարձրանում է բերքատվությունը:	Նույնիսկ լավագույն ագրոտեխնիկայի դեպքում բերքատվության բարձրացումը շատ քիչ է:
Պտղաբերման տարիք	Սկսում են պտղաբերել տնկումից 2-3 տարի հետո:	Սկսում են պտղաբերել տնկումից 5-6 տարի հետո:
Թունանյութերի ազդեցություն	Բարձր է թունաքիմիկատների օգտագործման արդյունավետությունը շնորհիվ նոսր և օդաթափանց սաղարթի:	Ունենալով մեծ և խիտ սաղարթ, փոքրանում է օդաթափանցելիությունը ինչը նպաստում է հիվանդությունների և վնասատուների տարածմանը:
Նորարարական տեխնոլոգիաներ	Ոռոգումը կատարվում է կաթիլային ոռոգման համակարգով, ինչը նպաստում է ջրի խնայողությանը: Տեղադրվում են կարկտապաշտպան ցանցեր, որի շնորհիվ ցրտահարության ու կարկտահարության վնասները հասնում են 0-ի:	Ոռոգումը կատարվում է ավանդական եղանակով, չեն տեղադրվում կարկտապաշտպան ցանցեր, որի հետևանքով բերքի կորուստը շատ մեծ է լինում:

Բերքա-հավաքը	Հեշտանում են բերքահավաքի աշխատանքները, կրճատվում է բերքահավաքի ծախսերի 50%-ը:	Բերքահավաքի կազմակերպման համար անհրաժեշտ է բավականին մեծ բանվորական ուժ, մեծանում են բերքահավաքի վրա կատարված ծախսերը:
Շահու-թաբերու-թյունը	Ապահովում է շատ որակյալ բերք՝ շահութաբերությունը ավանդականի համեմատ 3-4 անգամ մեծանումէ:	Ստացված բերքի որոշ մասը չի ունենում ապրանքային որակյալ տեսք, և շահութաբերությունը ինտենսիվի համեմատ շատ քիչ է:

Աղյուսակի արդյունքներից երևում է, որ ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը պտղաբուծության մեջ հնարավորություն է տալիս 1 հա հողատարածքի վրա մշակել ավելի մեծ քանակությամբ ծառ, քան ավանդականի դեպքում: Ինտենսիվ այգին ավելի շուտ է մտնում բերքատվության մեջ, քան ավանդական այգին: Այգու աշխատանքները ավանդականի համեմատ կրճատվում են մոտ 50%-ով, այգին պաշտպանված է լինում ցրտահարությունից, կարկտահարությունց և այլն:

Աղյուսակ 2.

1հա պտղատու ինտենսիվ և ավանդական այգու բույսերի նվազագույն թիվը ըստ պտղատեսակների և բերքատվության մակարդակի[10]:

Պտղատեսակ	Ինտենսիվ այգիներ		Ավանդական այգիներ	
	ծառերիթիվը 1հա-ի համար հատ	1 ծառից ստացված բերքի քանակը կգ	ծառերիթիվը 1հա-ի համար հատ	1 ծառից ստացված բերքի քանակը կգ
Ծիրանենի	600	30	179	150
Կեռասենի	800	15	417	90
Դեղձենի	1000	50	500	180
Սալորենի	600	25	180	140

Աղյուսակից երևում է, որ 1 հա-ի վրա ինտենսիվ գյուղատնտեսության դեպքում ծիրանի այգի հիմնելիս տնկվում է 600 ծառ, մեկ ծառից ստացվում է 30 կգ բերք, իսկ ավանդական եղանակով մշակման դեպքում 1 հա-ի վրա տնկվում է 179 ծառ, մեկ ծառից ստացվում է 150 կգ բերք: Աղյուսակից երևում է նաև, որ 1 հա կեռասի ինտենսիվ այգի հիմնելու դեպքում տնկվում է 800 ծառ, 1 ծառից ստացվում է 15 կգ բերք, ավանդական եղանակով մշակման դեպքում 1 հա կեռասի այգի հիմնելու դեպքում տնկվում է 417 ծառ 1 ծառից ստացվում է 90 կգ

բերք: Դեղձի մշակման դեպքում ինտենսիվ այգի հիմնելիս տնկվում է 1000 ծառ, մեկ ծառից ստացվում է 50 կգ բերք, ավանդական եղանակով մշակելու դեպքում տնկվում է 500 ծառ, մեկ ծառից ստացվում է 180 կգ բերք: Սալորի ինտենսիվ այգի հիմնելու դեպքում տնկվում է 600 ծառ, մեկ ծառից ստացվում է 25 կգ բերք, իսկ ավանդական մշակման դեպքում տնկվում է 180 ծառ, մեկ ծառից ստացվում է 140 կգ բերք:

Հաշվի է առնվել, որ այգիների հիմնման դեպքում թե՛ ինտենսիվ, թե՛ ավանդական մշակման դեպքում ծախսերը կարող են տարբեր լինել՝ կախված տեղանքից, հողի որակից, պտղատեսակներից, պատվաստակալներից և այլ հանգամանքներից:

Այգիների հիմնման ծախսերի մեջ չի ներառվել ջրման նորմայի տվյալը: Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ինտենսիվ այգեգործության ժամանակ ջրի կորուստը լինում է նվազագույն չափով՝ ի տարբերություն ավանդական այգեգործության, որի դեպքում ջրումը լինում է մարգերում, և ջրի կորուստը լինում է շատ:

Աղյուսակ 3.
1հա-ի հաշվով (ինտենսիվ և ավանդական) այգեգործության ծախսերի ցուցանիշների համեմատությունը:

N	Բուս. արտադրանք	1 հա ինտենսիվ այգու հիմնման ծախսերը	1 հա ավանդական այգու հիմնման ծախսերը
1	Հողի անալիզ	80,000	80,000
2	Հողի նախապատրաստական աշխատանքներ (վար, կուլտիվացիա, պարարտացում)	560,000	560,000
3	Տնկիներ (ներմուծված)- 5000 դրամ/հատ	4,950,000	2,475,000
4	Ծառերի տնկում	620,000	310,000
5	Կաթիլային ոռոգման համակարգ (ներ.ջրավազանը)	4,900,000	X
6	Ջրման նորմա	X	X
7	Հակակարկտային ցանց	8,800,000	X
	Ընդամենը	19,910,000	3,425,000

Աղյուսակից երևում է, որ 1 հա ինտենսիվ և ավանդական այգի հիմնելու համար անհրաժեշտ է ավանդական այգի հիմնելու համար 3,425,000 ՀՀ դրամ, իսկ ինտենսիվ այգի հիմնելու համար անհրաժեշտ է 19,910,000 ՀՀ դրամ: Արդյունքում երևում է, որ ինտենսիվ այգի հիմնելու համար ծախսերը բավականին բարձր են, քանի որ ինտենսիվ այգին հիմնվում է նոր տեխնոլոգիաներով: Ինտենսիվ այգու ծախսերը իրենց մեջ ներառում են՝ կաթիլային ոռոգման համակարգ 4,900,000 ՀՀ դրամ, որը չի օգտագործվում ավանդական այգեգործության դեպքում, հակակարկտային ցանց 8,800,000 ՀՀ դրամ, որը չի ներառում ավանդական այգեգործության դեպքում: Կրկնակի բարձր է ծառերի տնկման աշխատանքների դեպքում 620,000 ՀՀ դրամ, որը ավանդականի դեպքում կազմում է 310,000 ՀՀ դրամ:

Աղյուսակից երևում է նաև, որ 1 հա ինտենսիվ և ավանդական այգի հիմնելու դեպում ավանդական այգու համար տնկիներ ձեռք են բերվել 2,475,000 ՀՀ դրամի, իսկ ինտենսիվ ագի հիմնելու համար՝ 4,950,000 ՀՀ դրամի:

Հայաստանում գյուղատնտեսության մեջ պտղաբուծության զարգացումը տնտեսապես ավելի արդյունավետ զարգացնելու համար մեր հետազոտության մեջ ներկայացրել ենք ինտենսիվ այգեգործության և ավանդական (էքստենսիվ) այգեգործության տնտեսական արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և համեմատել դրանք: Հաշվարկները իրականացրել ենք երկու եղանակով՝ բնեղեն և արժեքային: Տնտեսական արդյունավետության բնեղեն ցուցանիշը ցույց է տալիս գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը: Բնեղեն ցուցանիշները հիմք են հանդիսանում տնտեսության արժեքային ցուցանիշների՝ համախառն և ապրանքային, համախառն և զուտ եկամտի, շահույթի և շահութաբերության հաշվարկման համար:

Աղյուսակ 4.

Տնտեսական արդյունավետության բնեղեն ցուցանիշների հաշվարկը:

N	Մթերք	Ավանդական		Ինտենսիվ	
		1 ծառից ստացված բերքատվություն (կգ)	1 հա համախառն արտադրանք (կգ)	1 ծառից ստացված բերքատվություն (կգ)	1 հա համախառն արտադրանք (կգ)
1	Ծիրանենի	150	6712.5	30	4500
2	Կեռասենի	90	9382.5	15	3000
3	Դեղձենի	180	22500	50	12500
4	Սալորենի	140	6300	25	3750

Աղյուսակից երևում է, որ բնեղեն եղանակով 1 հա ինտենսիվ և ավանդական այգիների տնտեսական արդյունավետության ցուցանիշները ցույց են տալիս, որ ծիրանենու 1 ծառից ստացված բերքատվությունը ավանդական այգու համար 150 կգ է, իսկ 1հա համախառն արտադրանքը՝ 6712.5 կգ, ինտենսիվ այգու համար 1 ծառից ստացված բերքատվությունը 30 կգ է, 1 հա համախառն արտադրանքը՝ 4500 կգ:

Կեռասենու 1 ծառից ստացված բերքատվությունը ավանդական այգու համար 90 կգ է, 1 հա համախառն արտադրանքը՝ 9382.5 կգ, իսկ ինտենսիվ այգու համար 1 ծառից ստացված բերքատվությունը 15 կգ է, 1 հա համախառն արտադրանքը՝ 3000 կգ:

Դեղձենու 1 ծառից ստացված բերքատվությունը ավանդական այգու համար 180 կգ է, 1 հա համախառն արտադրանքը՝ 22500 կգ, իսկ ինտենսիվ այգու համար 1 ծառից ստացված բերքատվությունը 50 կգ է, 1 հա համախառն արտադրանքը՝ 12500 կգ:

Սալորենու 1 ծառից ստացված բերքատվությունը ավանդական այգու համար 140 կգ է, 1 հա համախառն արտադրանքը՝ 6300 կգ, իսկ ինտենսիվ այգու համար 1 ծառից ստացված բերքատվությունը 25 կգ է, 1 հա համախառն արտադրանքը՝ 3750 կգ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինտենսիվ գյուղատնտեսության զարգացման ժամանակ բերքատվությունը լինում է ավելի վաղ, քան ավանդականի դեպքում, և այս հանգամանքով պայմանավորված՝ ապրանքները ավելի շուտ են մտնում շուկա, դրանից էլ կախված՝ ինտենսիվ այգուց ստացված բերքի գինը շուկայում ավելի բարձր է լինում, քան ավանդական այգուց ստացված բերքի գինը:

1 կգ բերքի վրա կատարած աշխատանքի վարձատրությունը ավանդական գյուղատնտեսության դեպքում կազմում է 30% (քանի որ աշխատատար է), իսկ ինտենսիվ գյուղատնտեսության դեպքում կազմում է 20% (քանի որ աշխատանքը մեքենայացված է):

Աղյուսակ 5.

Տնտեսական արդյունավետության ցուցանիշների հաշվարկը 1 հա ինտենսիվ և ավանդական այգեգործության համար (ծիրան, կեռաս, դեղձ, սալոր):

N	Բուս. արտադրանք	Ինտենսիվ					Ավանդական				
		Ծիրան	Կեռաս	Դեղձ	Սալոր	Ընդամենը	Ծիրան	Կեռաս	Դեղձ	Սալոր	Ընդամենը
1	1 հա-ից ստացված համախառն արտադրանք (կգ)	4500	3000	12500	3750	x	6712.5	9382.5	22500	6300	x
2	1 հա-ի վրա կատարված արտադրական ծախսերը (բացի աշխատա-վարձից) (ՀՀ դրամ)	X	x	x	x	19910000	x	x	X	x	3425000
3	1 կգ բերքի միջին գինը (ՀՀ դրամ)	1800	1500	1000	900	x	345	591	281	208	x
4	1 հա-ից ստացված համախառն բերքը (ՀՀ դրամ)	8100000	4500000	12500000	3375000	28475000	2315812.5	5545057.5	6322500	1310400	15493770
5	1 հա-ից ստացված համախառն եկամուտը (ՀՀ դրամ)	X	x	x	x	8565000	X	x	X	x	12068770

6	1 հա-ից ստացված զուտ եկամուտը (ՀՀ դրամ)	**X**	**x**	**x**	**x**	**4583000**	**X**	**x**	**X**	**x**	**11041270**
7	1 հա-ից ստացված եկամաբերության մակարդակը (%)	**X**	**x**	**x**	**x**	**19.2**	**X**	**x**	**x**	**x**	**76.9**

Տնտեսական արդյունավետության ցուցանիշը հաշվարկելուց հետո հանգեցինք այն եզրակացությանը, որ ինտենսիվ գյուղատնտեսության ներդրումը պտղաբուծության մեջ շատ ծախսատար է՝ ի տարբերություն ավանդական գյուղատնտեսության: Սակայն ինտեսիվ գյուղատնտեսության զարգացումը մեր երկրում կարող է նվազեցնել շատ ռիսկեր և ամեն տարի ապահովել կայուն եկամուտ: Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացման համար պետությունը իրականացնում է սուբսիդավորման ծրագիր, որից կարող է օգտվել յուրաքանչյուր քաղաքացի [11]:

Հաշվարկներից երևում է, որ 1 հա հողատարածքի վրա ինտենսիվ այգի հիմնելու դեպքում ներդրվել է 19.910.000 ՀՀ դրամ: Արդյունքում 1հա-ից արտադրության և իրացման եկամտաբերության մակարդակը կազմում է 19,2%:

Հաշվարկներից երևում է նաև, որ 1 հա հողատարածքի վրա ավանդական գյուղատնտեության հիմնման համար ներդրվել է 3.425.000 ՀՀ դրամ: Արդյունքում 1 հա-ից արտադրության և իրացման եկամաբերության մակարդակը կազմում է 76,9%:

Այս տվյալները իրականում մեզ ցույց են տալիս, որ 1 հա հողատարածքի վրա ավանդական գյուղատնտեության հիմնման համար ներդրվել է ավելի քիչ գումար և ստացվել է ավելի բարձր եկամտաբերության մակարդակ, որը չենք կարող ասել 1հա հողատարածքի վրա ինտեսիվ այգի հիմնելու համար: Սակայն, ի տարբերություն ավանդական գյուղատնտեսության, ինտենսիվ գյուղատնտեսությունը ապահում է ամեն տարի կայուն եկամուտ՝ իր նորագույն տեխնոլոգիաների շնորհիվ:

Ինտենսիվ գյուղատնտեսության կայուն եկամուտը պայմանավորված է 1 հա հողատարածքի վրա ինտեսիվ այգի հիմնելու համար նախատեսված հատուկ տեխնոլոգիաներով, որը իր մեջ ներառում է կարկտապաշտպան շերտ, կաթիլային ոռոգում և այլն: Արդյունքում ինտենսիվ այգին ավելի շուտ է մտնում բերքատվության տակ, քան ավանդական այգին: Ինտենսիվ այգուց ստացվում է

բացառապես հատընտիր բերք, ինչը չենք կարող ասել ավանդական այգու համար: Ինտենսիվ այգին ամեն տարի բերք է տալիս, իսկ ավանդականը՝ ոչ:

Արարատյան դաշտում ինտենսիվ եղանակով պտղաբուծության զարգացումը ՀՀ-ին կապահովի ամեն տարի կայուն բերքով, գյուղացուն կապահովի կայուն եկամուտով, գյուղատնտեսության մեջ էլ կնվազեն ռիսկերը:

Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքում կարող ենք ասել՝ ինտենսիվ այգեգործության զարգացումը ՀՀ-ում այն կդարձնի տնտեսապես ավելի արդյունավետ, որը չենք կարող հաստատել էքստենսիվ (ավանդական կամ դասական) այգեգործության վարման պարագայում:

Ինտենսիվ և ավանդական գյուղատնտեսության ծախսերի համեմատական ցուցանիշները ցույց են տալիս, որ ինտենսիվ գյուղատնտեսությունը ավելի ծախսատար է, քան ավանդականը, սակայն եթե հաշվի առնենք, որ ավանդական գյուղատնտեսությունը ամեն տարի եկամուտ չի ապահովում՝ բազմաթիվ ռիսկերից ելնելով, ապա ինտենսիվ գյուղատնտեսությունը ամեն տարի ապահովում է կայուն եկամուտ և շատ ռիսկերից պաշտպանված է:

Համեմատական ցուցանիշները վկայում են, որ ինտենսիվ գյուղատնտեսության ծախսերը հնարավոր է փոխհատուցել մի քանի տարում, իսկ ավանդական գյուղատնտեսության դեպքում՝ ավելի երկար ժամկետում (որոշ դեպքերում նույնիսկ չհատուցվի):

ՀՀ-ի գյուղմթերքի պահանջը կապահովի ինտենսիվ գյուղատնտեսությունը, ինտենսիվ գյուղատնտեսությունը կապահովի նաև ՀՀ-ի արտահանման հնարավորությունները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սարգսյան Հ., Մարգարյան Հ., Տնտեսագիտության տեսություն. ուսումնական ձեռնարկ, (երկրորդ հրատարակություն, լրամշակված և վերախմբագրված), Եր., ԵՊՀ հրատ., 2017, 320 էջ:
2. Հակոբյան Լ.Լ., Ճեպեճյան Շ.Ա., Գյուղատնտեսական էկոնոմիկա. ուսումնական ձեռնարկ բուհերի համար/ ՀՊԱՀ, Եր., 2012, 268 էջ:
3. Գրիգորյան Կ. Ա., Գրիգորյան Կ. Կ., Սանասարյան Ա. Ա., Պտուղների արտադրության և վերամշակման էկոնոմիկայի և մարքեթինգի հիմնահարցերը ՀՀ-ում (ագրարային բարեփոխումների անցումային փուլում), Եր., 1990, 64 էջ:

4. Մարգարյան Ա. Ե., Շահինյան Հ. Ն., Պտղաբուծություն, Երևան, 1976, 560 էջ:
5. Ափոյան Լ. Ա. , Պտղատու այգու հիմնումը և խնամքը, Երևան, 1969, 51 էջ:
6. https://aygi.am/
7. https://aygi.am/publications-and-consulting/publications
8. https://www.armstat.am/file/article/gner_2023_6.pdf
9. https://www.armstat.am/am/?nid=82&id=2590
10. https://drive.google.com/file/d/1ewR5Y5YbWhU6vzTjGgGX-DESgKQpzGdG/view
11. https://mineconomy.am/page/1948

INTENSIVE HORTICULTURE ECONOMIC EFFICIENCY AND ITS DEVELOPMENT FEATURES

AYRUMYAN IRINA
PhD in Economic Sciences, Associate Professor,
Lecturer at GSU and ANAU
e-mail: ayrumyanirina17@gmail.com
KOSTANYAN LUSINE
Lecturer at the Armenian State
University of Economics
e-mail: lusinekostanyan90@mail.ru

The economic progress of any society is based on the increase of economic efficiency of the social production.

The intensive horticulture development path contributes to the continuous growth of agricultural crops. This path enables the most efficient use of existing resources and usable agricultural lands.

In Armenia, horticulture has begun to develop rapidly along with other sectors of agriculture. The increase in the volume of fruit production can be achieved both by expanding land areas and by using the means of production efficiently.

In the first case, we refer to the extensive path of industrial development—traditional and classical—while in the second case, we consider the intensive path. With the intensive path of development, there is a concentration of capital per unit of land area and, with the same number of hectares, an increase in the volume of production per land plot.

The purpose of this study is that the intensive development of horticulture in agriculture can replace traditional ones, providing higher economic efficiency. The

development of intensive horticulture in our country will reduce the economic risks of horticulture in general, which will justify the relevance of this study.

Agriculture is an industry in which businessmen invest in order to obtain maximum profit at the expense of costs. However, agriculture is associated with many risks, and the development of intensive agriculture will reduce them.

Keywords: *intensive horticulture, economic efficiency, perennial plantings, investment efficiency, profit.*

ЭКОНОМИЧЕСКАЯ ЭФФЕКТИВНОСТЬ ИНТЕНСИВНОГО САДОВОДСТВА И ОСОБЕННОСТИ ЕГО РАЗВИТИЯ

АЙРУМЯН ИРИНА
Кандидат экономических наук, доцент,
Преподаватель ГГУ И НАУА
электронная почта: ayrumyanirina17@gmail.com
КОСТАНЯН ЛУСИНЕ
Преподаватель АГЭУ
электронная почта: lusinekostanyan90@mail.ru

Экономический прогресс любого общества основан на повышении экономической эффективности общественного производства.

Путь развития интенсивного садоводства способствует постоянному росту сельскохозяйственных культур. Этот путь позволяет наиболее эффективно использовать имеющиеся ресурсы и пригодные сельскохозяйственные земли.

В Армении наряду с другими отраслями сельского хозяйства быстрыми темпами началось развиваться плодоводство. Увеличение объемов производства продукции плодоводства может осуществляется как с помощью расширения земельных площадей, так и за счет эффективного использования средств производства.

В первом случае речь идет об экстенсивном пути развитии отрасли (традиционном, классическом), а во втором случае – интенсивном. При интенсивном пути развития имеет место концентрация капитала на единице земельной площади и при том же количестве гектаров увеличение объема производства на земельный участок.

Целью данного исследования является то, что интенсивное развитие садоводства в сельском хозяйстве может заменить традиционные, обеспечивая более высокую экономическую эффективность. Развитие интенсивного

садоводства в нашей стране позволит снизить экономические риски садоводства в целом, чем и обоснуется актуальность данного исследования.

Сельское хозяйство - отрасль, в которую бизнесмены инвестируют с целью получения максимальной прибыли за счет затрат. Но сельское хозяйство сопряжено со многими рисками, а развитие интенсивного сельского хозяйства позволит их снизить.

Ключевые слова: *интенсивное садоводство, экономическая эффективность, многолетние насаждения, эффективность инвестиций, прибыль.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 19.11.2024թ.:
Հոդվածը գրախոսվել է 10.12.2024թ.:
Ընդունվել է տպագրության 25.04.2025թ.: